ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ (ՍԵՎԱՆ) ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1921–1930 ԹԹ.

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի բնակչության թվաքանակի և ազգային կազմի ամբողջական պատկերը ներկայացնելու տեսանկյունից գիտական կարևոր հետաքրքրություն է ներկայացնում նաև Նոր Բայազետի (Սևանի)[1] գավառի բնակչության կազմում կատարված փոփոխությունների լուսաբանումը:

Ընդհանրապես, բնակչության աճը կատարվում է երկու ճանապարհով՝ բնական և մեխանիկական: Հիմնական աղբյուրը բնական աճն է, որը որոշվում է միավոր ժամանակամիջոցում ծնվածների ու մահացածների տարբերությամբ: Բնակչության թվաքանակը փոխվում է նաև կապված նրա կենսագործունեության ձևերից մեկի՝ տեղաշարժերի հետ: Այլխոսքով՝ յուրաքանչյուր ժողովուրդ՝ որպես կենդանի հավաքական մարմին, ունի շարունակականության իր ներքին տրամաբանությունը՝ վերարտադրվումումսերնդափոխվումէ, որն ուղեկցվում է նրա թվաքանակի փոփոխություններով՝ աճելով կամ նվազելով:

Նշված տարիներին Նոր Բայազետի գավառի բնակչության թվաքանակի փոփոխություններում հիշյալ աղբյուրների ունեցած դերը ցույց տալու համար անհրաժեշտ է հարցի քննությունն սկսել գավառի բնակչության աճին վերաբերող տվյալների լուսաբանումից: Այդ տեսակետից վստահելի են վիճակագրական վարչության կողմից հաճախակի կատարված ուսումնասիրությունների և մարդահամարների արդյունքները:

1921–1930թթ.գավառիբնակչությանթվաքանակիփոփոխություններիլուսաբանումըներկայացնենք ըստաղյուսակ 1-ի տվյալների[2]:

---

[1] *ՀՍԽՀԿենտգործկոմի 1929թ.հուլիսի 26-ի որոշմամբ գավառի վարչական կենտրոնը Նոր Բայազետ քաղաքից տեղափոխվեց Ելենովկա (այժմ՝ Սևան) և գավառը վերանվանվեց Սևանի գավառ (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6.VIII.1929):*

[2] *Տվյալները համադրվել, հաշվարկվել և աղյուսակը կազմվել է ըստ Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ. 112, ց. 8 c, գ.12, թթ.98–99, գ.13, թթ.22, 31, 51, գ.212, թ. 29, գ.219, թթ.29, 32, ֆ. 163, ց. 2, գ.56, թթ.48–60, գ.1357, թթ.7,48, գ, 1505, թ. 6, գ.1619, թ. 8, գ.1652, թ. 6, գ.2439, թ. 2, ֆ. 586, ց. 1, գ.7, թթ.24–25, գ.38, թ. 5, գ.62, թթ.1–6, «ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ», Երևան, 1936, էջ 7, 14, 15, 25, 26, 48, 51 և «Խորհրդային Հայաստան» թերթի 18.XI.1924, 3.II.1927 տվյալների:*

Աղյուսակ 1

Նոր Բայազետի գավառի բնակչությունը1921–1930թթ.

Գավառամա - սեր, քաղաքներ և քաղաքատիպ ավաններ	1921 թ.	1922 թ. առ 1-ը հոկտեմ-բեր	1923 թ. առ 1-ը հուն-վար	1924 թ. առ 1-ը հուն-վար	1925 թ. առ 1-ը հուն-վար	1926 թ. առ 1-ը հուն-վար	1927 թ. առ 1-ը հուն-վար	1928 թ. առ 1-ը հուն-վար	1929 թ. առ 1-ը հուն-վար	1929 թ. առ 30-ը հուլիս*	1930 թ. առ 5-ը օգոս-տոս**
Ելենովկայի գյուղերում		10238	10238	10459	10608	10751	10987	11205			
Ելենովկա ավանում		832	987	987	1004	1019	1034	1100	1032		
ընդամենը		11070	11225	11446	11612	11770	12021	12305			
Նոր Բայազետի գյուղերում		18711	18711	19282	20018	20528	21409	22163			
Նոր Բայազետ քաղաք		9342	8882	8718	8627	8535	8459	8730	9271		
ընդամենը		28053	27593	28000	28645	29063	29868	30893			
Մարտունու գյուղերում		24205	24205	24903	25650	26308	27215	28254			
Բասարգեչարի գյուղերում		25090	25090	26764	28353	29711	32629	34090			
գումարը գյուղական բնակավայրե_ րում		78244	78244	81408	84629	87298	92240	95712	98498		
գումարը քաղաքում և քաղաքատիպ ավանում		10174	9869	9705	9631	9554	9493	9830	10303		
ընդամենը ամբողջ գավառում	87164	88418	88113	91113	94260	96852	101733	105542	108801		-
Սևանի գավառ Ալափարսի շրջան										19403	
Ախտայի շրջան										39533	49111
Բասարգեչարի շրջան										39089	30351
Մարտունու շրջան										31297	41872
Նոր Բայազետի շրջան										24794	25093
Կարմիր գյուղի շրջան										16583	-
Նոր Բայազետ քաղաք										9900	8664
Ելենովկա ավան										1140	1353
ընդամենը ամբողջ գավառում										181739	156444

* *1929 թ. հուլիսի 30-ին ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունը հաստատեց Հայաստանի շրջանցման նոր ծրագիրը (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 31. VII. 1929):*

** *1930 թ. օգոստոսի 5-ին ՀՍԽՀ Կենտգործկոմը և ժողկոմխորհը համատեղ որոշում ընդունեցին գավառները վերացնելու մասին: Հայաստանում ստեղծվեց 25 շրջան (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6. VIII. 1930, 7. VIII. 1930):*

Աղյուսակի տվյալների համադրումը ցույց է տալիս, որ 1929թ.(հունվարի 1-ի դրությամբ) 1921թ. համեմատությամբ գավառի ընդհանուր բնակչությունն ավելացել է 21637շնչով: Նշանակում է՝ 9տարում բնակչության թվաքանակն աճել է 19,88%-ով: 1929թ. վարչատարածքային փոփոխություններից հետո գավառի աշխարհագրության ընդլայման շնորհիվ նրա բնակչությունը 1921թ. համեմատ ավելացել է 94575մարդով կամ աճել է 52,03%-ով: 1930 թ. (օգոստոս-սեպտեմբեր)՝ գավառները շրջանների վերածելուց հետո, երբՍևանի գավառի մի շարք բնակավայրեր միացվեցին Երևանի ու Դիլիջանի շրջաններին,նրա բնակչության թվաքանակը 1930թ. 1929թ. համեմատությամբ կրճատվել է 25295-ով կամ 13,91%-ով, իսկ 1921թ. համեմատ աճը կազմել է 44,28%: Հատկանշական է, որ Նոր Բայազետի գավառը բնակչության միջին տարեկան աճի տեմպերով զիջել է ՀՍԽՀ ընդհանուր բնակչության միջին տարեկան աճի ցուցանիշներին: Համեմատության համար նշենք, որ ՀՍԽՀ-ում 1922թ. (առ 1 հոկտեմբեր) մինչև 1930թ. (առ 1 հունվար) գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակը 781,7 հազարիցհասել է 999,3 հազարի, այսինքն՝ ավելացել է 217600շնչով կամ աճել է 21,71%-ով: Նույն ժամանակահատվածում Նոր Բայազետի գավառում այդ տարբերությունը կազմել է 20383 մարդ, այսինքն՝ աճել է 18,73%-ով կամ 2,98%-ով պակաս հանրապետության միջին ցուցանիշից[3]:

Նոր Բայազետի գավառում բնակչության թվաքանակնաճել է բացառապես սեփական վերարտադրության հաշվին: Բնակչության բնական աճը կապված էր ինչպես ծննդի, այնպես էլ մահացության հարաբերակցության հետ (տե՛ս աղյուսակ 2)[4]:

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ Նոր Բայազետի գավառին բնորոշ էր բնակչության ինչպես ընդհանուր գործակցի, այնպես էլ ծնելիության հատուկ գործակցի բարձրանալը: Այդ տարիներին բնակչության բնական վերարտադրությունը կատարվել է ծննդի շարունակական ավելացման ու մահացության մակարդակի նվազման պայմաններում: Ըստ աղյուսակի տվյալների՝ 1922–1928 թթ. գավառում 40420 ծննդի դիմաց մահա-

---

[3] *Հաշվարկը կատարվել է աղյուսակ 1-ի, ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ.2439, թ. 1 և□Խորհրդային Հայաստան□թերթի 13.XI.1929 տվյալների հիման վրա:*

[4] *Տվյալները համադրվել, հաշվարկվել և աղյուսակը կազմվել է ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ.10, թ. 11, գ.41, թթ.28–33, 63–64, գ.88, թթ.69–71, գ.2384, թթ. 1–13, գ. 2421, թթ.18–25 և աղյուսակ 1-ի տվյալների հիման վրա:*

ցությունը եղել է 12850, այսինքն՝ ծնվածների մեջ մահացածների տեսակարար կշիռը կազմել է 31,79 %: Ընդ որում, ծնվածների մեջ տղա երեխաները կազմել են 51,73, իսկ աղջիկները՝ 48,26 %, 3,47 %-ով պակաս: Նույն տարիների կտրվածքով բնակչության մահացության տվյալների դիտարկումը ցույց է տալիս, որ մահացության թվաքանակով ևս տղաների ցուցանիշը բարձր է՝ 52,87 %, աղջիկների 47,12 %-ի դիմաց:

Աղյուսակ 2

Բնակչության աճն ըստ տարիների

Տարեթիվ	Բնակչության թիվը	Ծնունդ			Մահ			Բացարձակ աճը			Աճը %		
		ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	բնական	մեխանիկական	գումարը
1921	87164*	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
1922	88418	2135	1885	4020	928	669	1597	1207	1216	2423	2,74	-1,32	1,42
1923	88113	2788	2448	5236	864	699	1563	1924	1749	3673	4,17	-4,52	0,25
1924	91113	3112	2941	6053	1315	1124	2439	1797	1817	3614	3,97	-0,67	3,3
1925	94260	3174	2955	6129	789	698	1487	2385	2257	4642	4,92	-1,59	3,33
1926	96852	3306	3167	6473	840	774	1614	2466	2339	4805	4,96	-2,28	2,68
1927	101733	3195	3009	6204	970	939	1909	2225	2070	4295	4,22	0,58	4,80
1928	105542	3201	3104	6305	1089	1152	2241	2112	1952	4064	3,85	-0,24	3,61
1929	108801**	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
գումարը		20911	19509	40420	6795	6055	12850	14116	13400	27516	28,83		19,39

* *1921 թ. վերաբերյալ այդ կարգի վիճակագրական տվյալներն ամբողջական չէին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 23–83, թ. 1–2, գ. 2389, թ. 2–3):*

** *Բնակչության աճում ծննդի և մահացության թվաքանակը հաշվի չի առնված՝ կապված նոր վարչական փոփոխությունների հետ:*

Ծնելիության ընդհանուր գործակցի վրա էական ազդեցություն են ունեցել՝ մի կողմից ամուսնությունների թվի աճը, մյուս կողմից՝ ամուսնալուծությունների նվազումը: Օրինակ՝ 1924թ.համեմատությամբ 1928թ. գավառում ամուսնությունների թիվն աճել է 1,45անգամ, իսկ ամուսնալուծությունների թիվը կրճատվել է գրեթե կիսով չափ[5]: Այդ երևույթը հետևանք էր նաև ամբողջ հանրապետությունում, այդ թվում Նոր Բայազետի գավառում բնակչության աշխատանքային ու կենցաղային պայմանների շոշափելի բարելավման:

Բարձրծնելիությունը, անշուշտ, ուղեկցվում էր բնակչության թվաքանակի ավելացման մեջ բնական վերարտադրության գործակցի բարձրացմամբ: Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ 1922–1928թթ.Նոր Բայազետի գավառում բնակչության թվաքանակն աճել է բացառապես բնական ճանապարհով՝սեփական վերարտադրությամբ:

Բացարձակ թվերով պատկերն այսպիսին է. եթե նկատի ունենանք, որնշված տարիներին Նոր Բայազետի գավառում բնակչության թվաքանակն ավելացել է 17124 մարդով (16,22%-ով), իսկ այդ ընթացքում ծնված երեխաների բացարձակ թիվը կազմել է 27516, ապա ստացվում է, որ 9տարիների ընթացքում 10392մարդ հեռացել է գավառից: Այլկերպ՝ 1922–1928 թթ., (բացառությամբ 1927թ.), Նոր Բայազետի գավառը բնութագրվում է բնակչության մեխանիկական տեղաշարժերի բացասական մնացորդով, այսինքն՝ արտահոսքը գերազանցում էր ներհոսքին:

Վիճակագրական նման պատկերը, անշուշտ, բացատրվում է ոչ թե գավառներ գաղթելու ցանկություն արտահայտողների թվի նվազումով, այլ մեկնածների թվաքանակի գերազանցումով: Այդ տարիներին ԽՍՀՄ հանրապետություններից և հեռավոր արտասահմանից մեծաթիվ բնակչության հոսք դեպի Նոր Բայազետի գավառ շարունակական է եղել: Այդ մասին են վկայում հետևյալ տվյալները.այսպես,1922թ.Գանձակից, Ղազախից և Բորչալուի շրջանից Նոր Բայազետի գավառ են վերադարձել 8500թուրքեր, 1924թ.՝ ևս 8 հազար[6](ընդհանուրթվով16 հազ. 500), Ղարաքիլի-

---

[5] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 10, թ. 11, գ.2421, թթ. 18–25:*

[6] *«Խորհրդային Հայաստան», 8.X.1922, 5.XII.1922, 18.XI.1924: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության ենթակայության ներքո գտնվող մի շարք վայրերում թուրք-թաթարական բնակչությունը հանդես եկավ հակապետական ելույթներով ու գործողություններով, ամեն միջոցի դիմեց ձախողելու նորանկախ պետության*

սայի գավառից՝ 1900արևմտահայ գաղթականներ: 1925–1928թթ.Ղազախից ու Բաքվից(մահմեդականներ), Թիֆլիսից, Դիլիջանի գավառից, Արևմտյան Հայաստանից և այլ վայրերից մոտավոր հաշվումներով Նոր Բայազետի գավառ է տեղափոխվել շուրջ 6630մարդ[7]:

Բնակչության մեծ զանգվածներով արտահոսքը պայմանավորված էր Նոր Բայազետի գավառի բնակլիմայական պայմաններով և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկություններով: Այդ առումով որոշիչ են եղել հետևյալ հանգամանքները.

– բնակչությունը հիմնականում գյուղաբնակ էր և զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Լեռնային ծածկույթ ունեցող գավառի հողահանդակների կազմում չափազանց փոքր էր պիտանի հողերի տեսակարարկշիռը, այն դեպքում, երբ գավառում բազմահազար էին հողազուրկ և սակավահող գյուղացիները:

– Գյուղական բնակչության արտահոսքին նպաստում էր նաև հանրապետության տնտեսության ինդուստրիալ հիմունքներով արագ վերափոխումը: Խոսքն այն մասին է, որ Հայաստանի ինդուստրիալ զարգացման հետևանքով ծավալվում էր գյուղից արտագնացության հոսք դեպի արդյունաբերական կենտրոններ՝ զբաղմունք գտնելու ակնկալությամբ: Այլ խոսքով՝ գյուղից դեպի քաղաք արտահոսքին խթանում էր գյուղատնտեսության մեջ աշխատանք գտնելու նվազ հնարավորությունները: Շարունակաբար խորացող այս երևույթը ծանր էր անդրադառնում

կայացման գործընթացը: Նրանք քայքայիչ և ապակայունացնող լայն գործունեություն ծավալեցին նաև Նոր Բայազետի գավառի ստվար թուրք-թաթարական բնակչություն ունեցող Բասարգեչարի գավառամասում: Այդ երևույթները ճնշվեցին: Հանրապետության կառավարության վերաբերմունքը մահմեդական բնակչության նկատմամբ հասկանալի պատճառներով նկատելիորեն կարծրացավ: Դրանից բարդացան և խիստ տուժեցին կողքկողքի ապրող հայ և մուսուլման ժողովուրդների հարաբերությունները:Այդ ամենին հետևեց մահմեդական բնակչության արտահոսքը դեպի Ադրբեջան և Նախիջևան: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նրանք ստվար զանգվածներով վերադարձան նախկին բնակավայրերը(տե՛սՀ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Նոր Բայազետի գավառը 1914–1920թթ., Երևան, 2012, էջ 37):

[7]Հաշվարկը կատարվել է ՀԱԱ, ֆ. 586, ց. 1, գ.6, թթ.1–10, գ.62, թ. 39, ֆ. 123, ց. 5, գ.34, թ. 4, «Խորհրդային Հայաստան»թ երթի, 18.XI.1924, 12.I.1926, 2.X.1926, 24.I.1929 տվյալների հիման վրա: Ավելորդ չէ նշել, որ գաղթականների տեղավորման աշխատանքները դրված էր Ներքին գործերի ժողկոմատի վրա: Այդ աշխատանքները գործնականում կատարելու համար նախարարությանը կիցստեղծվել էր հանձնաժողով ՆԳ ժողկոմի տեղակալ Ա. Բերբերյանի գլխավորությամբ (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 2.X.1926):

գյուղիու գյուղացիության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական առաջընթացի վրա: Այս առնչությամբ տեղին է մեջբերել «Ավանգարդ» թերթի 1928թ. մարտի18-ի համարի Ս. Օհանյանի «Գյուղական կազմակերպությունների ներկա դրությունը» վերտառությամբ հրապարակումից մի հատված. «Վերջին ժամանակներս մեր կազմակերպության ներսում (խոսքը Նոր Բայազետի գավառի գյուղականների տասարդական կազմակերպությունների մասին է.–Հ. Հ.)նկատելի է մի երևույթ, դա այն է, որ գյուղական կազմակերպությունների կողմից հոսանք է սկսվել դեպի արդյունաբերական կենտրոններ, ինչպիսին են Բաքու, Բաթում, Թիֆլիս և այլն: Պիտի նկատել, որ գյուղից հեռանում է կազմակերպության բազան, ինչպիսին է բատրակ և չքավորերի-տասարդությունը, որի վրա են միայն մեր գյուղական կազմակերպությունները հենվում»[8]:

– Այս երևույթը նաև կոլեկտիվացումը բռնի մեթոդներով իրականացնելու հետևանք էր: Այս ամենին, իհարկե, գումարվում էր, այսպես կոչված, կուլակներին արտաքսել ու քաղաքականությունը: Այսպիսով, բնակչությունը արտագաղթում էր անհուսությունից, անպաշտպանվածությունից, ինչպես նաև զբաղվածության խնդիր լուծելու, ապրուստ հայթայթելու, տնտեսապես և սոցիալապես տանելի ու ապահով վիճակում ապրելու մտայնությամբ:

Հատկանշականէ, որՆոր Բայազետի գավառի բնակչության քանակական փոփոխությունների հետ կապված՝ էական տեղաշարժեր են կատարվել նաև նրա ազգային կազմում (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակից պարզորոշ երևում է, որ 1922–1926 թթ., այսինքն՝ 5 տարվա ընթացքում Նոր Բայազետի գավառի բնակչության թվաքանակն ավելացել և 88418-ից հասել է 101570, աճել է 1,14 անգամ կամ 12,94 %-ով: Նույն ժամանակահատվածում հայ բնակչությունն աճել է 1,12 անգամ կամ 11 %-ով: Ուշագրավ մեկ դիտարկում ևս. 1929 թ. 1922 թ. դիմաց ընդհանուր բնակչության կազմում հայերի տեսակարար կշիռը կրճատվել է 2,19 %-ով, 86,65-ից կազմել է 84,46%:

Հայ բնակչության բացարձակ աճի տեմպերի նվազմանը հակառակ՝ արձանագրվել է մուսուլմանների (թուրք, քուրդ, պար-

[8] *«Ավանգարդ», 18.XII.1928:*

սիկ) աճի բարձր տեմպեր: Վերոնշյալ տարիներին գավառի ընդհանուր բնակչության մեջ նրանց թվաքանակն ավելացել է 4035 մարդով և հասել է 14902-ի կամ աճել է 27 %-ով: Ընդ որում, մուսուլմանների կազմում թուրքերնուներին բացարձակ մեծամասնություն, որը տատանվում էր 94–98 %-ի սահմաններում:

Հատկանշական է, որ մահմեդական բնակչությունը հիմնականում բնակվում էր Բասարգեչարի գավառամասում: Բավական է նշել, որ 1926 թ. 14902 գավառաբնակ մուսուլմաններից 13997-ը (94,87 %) բնակվում էր նշված գավառամասում: Դա կարելի է բացատրել Բասարգեչարի գավառամասը աշխարհագրորեն Ադրբեջանին անմիջական սահմանակից լինելու հանգամանքով: Բացի դրանից՝ գավառամասն ուներ անասնապահությամբ զբաղվելու համար նպաստավոր պայմաններ, իսկ մուսուլմանների կյանքում անասնապահությունը հաստատուն տեղ է գրավում:

Հիշատակված և այլ գործոնների միահյուս դրսևորման հետևանքով հետագա տարիներին նույնպես Նոր Բայազետի գավառի ժողովրդագրական գործընթացներում արձանագրվել է մուսուլման բնակչության աճի բարձր տեմպեր: Օրինակ՝ 1930 թ. 1926 թ. համեմատությամբ Բասարգեչարի շրջանում ընդհանուր բնակչության մեջ նրանց տեսակարար կշիռը աճել է 15,6 %-ով և 43,16-ից հասել է 58,15 %-ի: Նույն ժամանակահատվածում հայ բնակչության մոտտեղի է ունեցել կրճատում՝ 56,3 %-ից նվազել է 41,7 %-ի[9]: Նույն էր վիճակը (չնչին բացառություններով) նաև գավառի մյուս շրջաններում:

[9] *Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ.1652, թթ. 5–6 և «ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ», Երևան, 1936, էջ 25–26 տվյալների:*

Աղյուսակ 3

Նոր Բայազետի գավառի բնակչության թիվը և ազգային կազմը 1922թ.

Գավառներում և քաղաքներում	Բնակչության ընդհանուր թիվը			Հայ			Թուրք-թաթար			Ռուս			Եզդի			Պարսիկ			Քուրդ			Այլք		
	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.
Ելենովկայի գյուղերում	5625	5445	11070	5138	4925	10063	36	24	60	442	489	931	-	-	-	-	-	-	9	7	16	-	-	-
Նոր Բայազետի գյուղերում	9576	9135	18711	9283	8890	18173	286	240	526	-	-	-	7	5	12	-	-	-	-	-	-	-	-	-
Մարտունու գյուղերում	12006	12199	24205	11885	12060	23945	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	19	12	31	-	-	-
Բասարգեչարի գյուղերում	12902	12188	25090	7622	7517	15139	5232	4619	9851	-	-	-	-	-	-	-	-	-	48	52	100	-	-	-
Գումարը գյուղերում	40109	38967	79076	33928	33392	67320	5656	5010	10666	442	489	931	7	5	12	-	-	-	76	71	147	-	-	-
Նոր Բայազետ քաղաք	4631	4711	9342	4606	4689	9295	8	4	12	3	2	5	12	15	27	-	-	-	-	-	-	-	-	-
ընդամենը	44740	43678	88418	38534	38081	76615	5664	5014	10678	445	491	936	19	20	39	-	-	-	78	72	150	-	-	-
	1926թ.																							
Ելենովկայի գյուղերում	5409	5560	10969	5283	5424	10707	2	3	5	95	108	203	5	5	10	-	-	-	23	20	43	-	-	-
Ելենովկա ավանում	529	503	1032	252	195	447	-	-	-	268	298	566	1	2	3	-	-	-	8	7	15	-	1	1
Նոր Բայազետի գյուղերում	10740	10630	21370	10431	10404	20835	277	198	472	-	3	3	6	6	12	-	-	-	29	19	48	-	-	-
Մարտունի	13379	13795	27174	13312	13720	27032	62	67	129	-	2	2	-	-	-	-	-	-	5	6	11	-	-	-
Բասարգեչար	16719	15859	32578	9224	9137	18361	7101	6343	13444	4	3	7	-	-	-	207	202	409	140	144	284	-	1	1
Նոր Բայազետ քաղաքում	4172	4275	8447	4147	4261	8408	14	1	15	9	11	20	-	-	-	-	-	-	2	-	2	-	1	1
գումարը գյուղական վայրերում	46247	45844	92091	38250	38685	76935	7439	6611	14050	99	116	215	11	11	22	207	202	409	197	189	386	-	1	1
գումարը քաղաքներում	4701	4778	9479	4395	4456	8855	14	1	15	277	309	586	1	2	3	-	-	-	10	7	17	-	2	2
ընդամենը	50948	50622	101570	42649	43141	85790	7453	6612	14065	376	425	801	12	13	25	207	202	409	207	196	403	-	3	3

ցուցակագրության և 1926թ.մարդահամարի տվյալներով[10]

Դա, անկասկած, պայմանավորված էր ոչ միայն այդ ժողովուրդներին բնորոշ ծնելիության բարձր մակարդակով և Ադրբեջանից, Հյուսիսային Կովկասից ու հարևան շրջաններից դեպի Նոր Բայազետի գավառ նրանց զանգվածաբար ներթափանցումով, այլև նրանով, որ վերջիններս, արագ ինտեգրվելով նոր պայմաններին, հայերի պես արտագնացության տեղաշարժի չենթարկվեցին: Այլ կերպ ասած՝ արտագնացությունը հատուկ չի եղել մուսուլման ժողովուրդներին: Ասվածը հիմնավորելու համար վկայաբերենք «Մշակ» թերթի մի հրապարակումից հետևյալ մեջբերումը. «Թուրքաբնակ գյուղերն անշարժ են մնում, նրանք ոչ մի ժամանակ օտարության չեն գնում»[11]:

Ինչպես արդեն ցույց է տրվել աղյուսակ 1-ում, Նոր Բայազետի գավառի բնակչության 94,47%-ը կազմում էր գյուղացիությունը, այսինքն՝ գյուղաբնակ էր: Հատկանշական է, որ 1922–1929թթ. (մինչևվարչականփոփոխությունները) գավառի գյուղական բնակավայրերի թիվը էական փոփոխություն չի կրել, ավելացել է ընդամենը 5-ով և հասել է 87-ի[12]:

Գյուղական բնակավայրերի բաշխվածությունն ըստ գավառամասերի ներկայացնում էր հետևյալ պատկերը. 1922թ. 82 գյուղերից 12-ը (հայաբնակ՝ 10, մոլոկանաբնակ՝ 2)գտնվում էր Եղենովկայի, 13-ը(հայաբնակ՝ 10, խառը՝հայ-թուրքական՝ 3)՝Նոր Բայազետի, 17-ը (հայաբնակ՝ 14, թուրքաբնակ՝ 2, խառը՝ թուրք-քրդական՝ 1)՝ Մարտունիի, 40-ը (հայաբնակ՝ 11, թուրքաբնակ՝ 22, քրդաբնակ՝ 2, խառը՝ թուրք-հայկական՝ 5)՝Բասարգեչարի գավառամասերում[13]:

1929թ. 87 գյուղերից 27-ը կամ 31,03%-ը միատարր թուրքաբնակ էր, իսկ 6-ը (6,90%)՝խառը թուրքաբնակ: Սևանի գավառի ստեղծումով գյուղերի թիվը հասել է 180-ի և 1929թ. համեմատությամբ աճել է 48,33%-ով[14]: Ավելացած գյուղերը բնակչության էթնիկական կազմի առումով հայաբնակ էին, բացառությամբ մոլոկանաբնակ Սեմյոնովկայից:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ գավառում փոքր էր խառը բնակչություն ունեցող գյուղերի թիվը. 1922թ.այդպիսիք կազմում էին բոլոր գյուղերի 14,63%-ը, իսկ 1929թ.՝11,49 %-ը[15]:

Սակավահող և բազմազգ բնակչություն ունեցող Հայաստանի համար գյուղական բնակավայրերի բնակեցման էթնիկական կազմի(միատարրկամխառը)խնդիրը երկրորդական նշանակության հարց չէր: Բան նայն է, որ արտերկ-

---

[10] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1474, թ. 48, գ.1652, թթ.5–6, գ. 1505, թ. 6:*

[11] *«Մշակ», 1.V.1910, 14.VII.1910:*

[12] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 8c, գ. 291, թ. 35 և «Խորհրդային Հայաստան», 7.II.1922:*

[13] *Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ.112, ց. 8c, գ.219, թ. 6, ֆ. 163, ց. 2, գ.56, թթ.47–51, «Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի», Երևան, 1923, էջ 42–48, «Խորհրդային Հայաստան», 7.II.1922 տվյալների:*

[14] *Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 112, ց. 8 c, գ.13, թթ.6, 16, գ.56, թթ.47–59, գ. 219, թ. 35, «Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի», էջ 42–48 տվյալների հիման վրա:*

[15] *Հաշվարկը կատարվել է ըստ «Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի», էջ 42–47, «ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ», էջ 14–15, 25–26,48,53 տվյալների:*

րից հայություններգաղթի հոսքը դեպի Խորհրդային Հայաստան շարունակ ավելանում էր: Հանրապետության իշխանություններից պահանջվում էր առավելագույնս արդյունավետ օգտագործել հողային հնարավորությունները և կարճ ժամկետում լուծել նրանց հողովապահովելուհարցը: Խնդիրը լուծելու համար, իթիվս այլ միջոցների, հանրապետության իշխանություններն աչքի առաջ ունեին նաև թուրքաբնակ հողաշատ մի շարք գյուղերում գաղթականներին տեղավորելը[16]: Սկզբնական շրջանում փորձ արվեց խնդիրը լուծել թուրքաբնակ միատարր գյուղեր ստեղծելու ճանապարհով, այն է՝ թուրքաբնակ գյուղերում հայ գաղթականությանը բնակեցնելու փոխարեն երկու կամ ավելի հողաշատ գյուղերի թուրք ազգաբնակչությանը կենտրոնացնել գյուղերից մեկում, ազատվող գյուղերն ամբողջովին տրամադրել գաղթականներին[17]: Շուտով, սակայն, Հայաստանի ղեկավարությունը միատարր թուրքաբնակ գյուղեր ստեղծելու ճանապարհով խնդրի լուծումը համարեց անարդյունավետ ու հրաժարվեց դրանից: Կառավարությունն անցավ հողաշատ գյուղերում թուրք բնակչության հետ խառը գաղթականներին ու հողազուրկ գյուղացիներին բնակեցնելու քաղաքականության[18]:

Խառը գյուղերի ստեղծումով, անշուշտ, մասամբ թուլացավ հողասակավության հետ կապված սոցիալական լարվածությունը: Սակայն այդ քաղաքականության իրագործումը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Խոսքն այն մասին է, որ խառը բնակչությամբ բնակավայրերի թվի ավելանալը նոր, մեկ այլ բնույթի լարվածության առիթ հանդիսացավ. հայերի և մուսուլմանների (հիմնականում՝ թուրք-թաթար)միջև էլ ավելի խորացրեց ատելությունն ու թշնամանքը:

Նոր իրադրության պահանջով խնդրին անդրադարձավ Հողժողկոմատը: ՀողժողկոմԱր. Երզնկյանը և հողվարչության պետ Խ. Ավդալբեկյանը ՀԿ(բ)ԿԿԵնտկոմ հասցեագրած 1925թ. նոյեմբերի 25-ի զեկուցագրում նշել են. «Մինչև այսօր հնարավոր չի եղել տանելի կերպով հարդարել հարաբերությունները խառը գյուղերում, ինչպիսիք են Վաղուդինու Բազարչայը (Զանգեզուր), Ջուլնու Չիվան(Դարալագյազ), Մազրանու Ալեքսանդրովկան (Նոր Բայազետ) և այլն»[19]:Հաշվի առնելով ստեղծված կացությունը՝ Հողժողկոմատը կարծիք է հայտնում, որ թուրքաբնակ հողառատ շրջաններում գաղթականությանը տեղավորելիս անհրաժեշտ է հիմնովին հրաժարվել խառը գյուղեր ունենալու մտքից[20]:

Գյուղական բնակչության թվաքանակի և գյուղական բնակավայրերի թվի տվյալների համադրումը ցույց է տալիս, որ 1929թ. գավառում յուրաքանչյուր գյուղին միջին հաշվով բաժին էր ընկնում 223ծուխ՝ 1922թ. 186-ի դիմաց[21]: Անշուշտ, ժամանակի համար սա վատ ցուցանիշ չէր, սակայն, պետք է նկատի

---

[16] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 283, թ. 11:*

[17] *Տե՛սնույնտեղում:*

[18] *Տե՛սնույնտեղում:*

[19] *Տե՛սնույնտեղում:*

[20] *Տե՛սնույնտեղում:*

[21] *Հաշվարկը կատարվել է «Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի», էջ 42–48 տվյալների հիման վրա:*

ունենալ, ո կային փոքրաթիվ ծխերից բաղկացած շատ բնակավայրեր: Օրինակ՝ 1922թ.Նոր Բայազետի գավառում 200-ից մինչև 300ծուխ ունեցող գյուղերի թիվը եղել է 16(ընդհանուրգյուղերի15,85% -ը), 300-ից բարձր մինչև 500՝14 (19,51%), 500-ից բարձր մինչև 1000՝ 2գյուղ և 1քաղաք (3,66%)[22],իսկ 1929թ.համապատասխանաբար 21 (24,14%), 13 (14,94%) և 3գյուղ ու 1 քաղաք (3,45 %)[23]:

Քննարկվող հարցի տեսանկյունից հետաքրքիր է դիտարկել գյուղերի բնակչությունը նաև ըստ շնչերի: Այսպես, պաշտոնական վիճակագրության տվյալներով 1924թ. գավառում միջին հաշվով 9գյուղ (ընդհանուր գյուղերի 10,58%-ը) ուներ 300-ից մինչև 500բնակիչ, 11-ը՝ (12,94%) 500-ից մինչև 1000, իսկ 34-ը՝ (40%) 1000-ից ավելի բնակիչ[24]: 1929թ. տվյալներով կտրուկ աճել է 1000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղերի թիվը և 34-ից հասել է 41-ի, որը կազմում է ընդհանուր գյուղերի 47%-ը[25]՝ 1924թ. 40%-ի դիմաց: Սա նշանակում է, որ գավառում աճել է բնակչության միջին խտությունը 1 քառ. կմ հաշվով: Պաշտոնական վիճակագրության տվյալներով եթե գավառում 1923թ.1 քառ. կմ վրա միջին խտությունը կազմում էր 24,5մարդ, ապա 1926թ.՝ 34,3մարդ, այսինքն՝4տարումայդցուցանիշնավելացելէ28,57%-ով[26]: Հայաստանում այդ ցուցանիշը կազմում էր 30,3մարդ.[27]

Եթե դիտարկում ենք վերը նշված հարցը ըստ գավառամասերի, ապա անհամամասնությունն ավելի ակնառու է դառնում: Այսպես, 1926թ. բնակչության միջին խտությունը 1քառ. կմ վրա Ելենովկայի գավառամասում կազմել է 53,3, Նոր Բայազետին՝ 46,7, Մարտունիին՝ 30,1, Բասարգեչարին՝ 27,2մարդ: 1930թ.Սևանի գավառի վերացումով և նրա տարածքի վրա նոր վարչական միավորումների ստեղծումով էապես փոխվեց վերջիններիս բնակեցվածության միջին խտությունը: Ըստ պաշտոնական տվյալների՝Ախտայի շրջանում 1քառ.կմ վրա միջին խտությունը եղել է 41,1,Նոր Բայազետին՝54,4, Բասարգեչարին՝25,2, Մարտունիին՝ 46,4մարդ[28],գավառի մասշտաբով միջինը կազմել է 41,78մարդ:

Այսպիսով, խնդրո առարկա ժամանակահատվածում Նոր Բայազետի (Սևանի) գավառի բնակչության թվաքանակը զգալիորեն ավելացել է բացառապես սեփական վերարտադրության հաշվին: Գավառը բնութագրվում էր բնակչության մեխանիկական տեղաշարժերի բացասական մնացորդով, այսինքն՝ արտահոսքը գերազանցում էր ներհոսքին: Գավառը բնակչության միջին տարեկան աճի տեմպերով զիջում էր ՀՍԽՀ ընդհանուր բնակչության համապատասխան ցուցանիշներին:

НАСЕЛЕНИЕ УЕЗДА НОВЫЙБАЯЦЗЕТ(СЕВАН)

---

[22] *Հաշվարկը կատարվել էվերը նշված աղբյուրի տվյալների հիման վրա:*

[23] *Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ.2449, թթ. 35–39 տվյալների:*

[24] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 8 c, գ. 13, թ. 3:*

[25] *Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ.2449, թթ. 35–39 տվյալների:*

[26] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, ց. 5, գ. 323, թ. 7:*

[27] *Տե՛ս նույն տեղում:*

[28] *Տե՛ս «ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ», էջ 7–8, 14–15, 25–26, 48, 53:*

В 1921 – 1930гг.

ГАМЛЕТ АРУТЮНЯцН

Резюме

В 1921 – 1930 гг.численность на селения уезда Новый Баязет существенно увеличилась. Для него был характерен рост как общего показателя, так и специального показателя рождаемости. На показатель рождаемости оказали значительное влияние, с одной стороны – увеличение числа браков, а с другой – снижение числа разводов. Это явление наблюдалось по всей стране, в том числе и в исследуемом уезде, где улучшилисьтрудовые и бытовые условия жизни населения. Высокий уровень рождаемости (преимущественно у мусульманского населения), безусловно, сопровождался ростом численности населения, увеличением показателя естественного воспроизодства(что определяется разницей между рождаемостью и смертностью в единице времени). Уезд характеризовался отрицательным балансом механических передвижений, то есть отток превышал приток. Среднегодовой темп роста населения уступал соответствующему показателю общей численности населения АрмССР.

POPULATION OF NOR BAYAZET (SEVAN) PROVINCE
IN 1921–1930

HAMLET HARUTYUNYAN

Summary

In 1921–1930 the population of Nor Bayazet province was obviously increased.Both the total coefficient and increasing fertility rates of population were peculiar to the province. On the one hand the increase in the numbers of marriages and on the other hand the decrease of divorces had a significant impact on the total rates of fertility.This phenomenon was resulted by substantial improvement of working and living conditions in the whole republic and in the province, as well.High rates of fertility (particularly of Muslim population)were certainly accompanied by the increase of natural reproduction coefficient (that is determined by the difference in the numbers of births and deaths within the unit of time) in the increased population.The province was characterized by a negative balance of mechanical movements,i. e. the outflow exceeded the inflow.The rates of average annual population growth gave way to the correspondent rates of total population in the ArmSSR.